



44. ՔՈՍԱԿԻ ՀԵՔԱԹՐ

էլեւ ա, չի էլեւ, մի թագավոր: Թագավորն ունեցիւ ա իրեք աղջիկ, էս ըխչկերանցը՝ ամենին մի օթախ խազինա:

— Ո՞վ որ օթաղն պահի, էդ խազինան իրան եմ տալի, ով դռնաղ չի, գողանալ կտա, նրան շատ բաժին չեմ տա:

էդ էրկու աղջկաց խազինեն գողացել են, գողացել են տարել: Պուճուրը ըխչկանը մնացել ա:

Պուճուր աղջիկը ասել ա, որ.— Ինձ քաշալ ու քոսակի չի տաս:

էկել ա մի քոսակ էդ ըխչկանը ուզում:

Թագավորն ասել ա, որ.— Չէ՛, տալ չեմ, իմ աղջիկս ինձ ասել ա, որ քաշալ ու քոսակի չի տաս:

Գնաց էդ Քոսակը իժի մագերից կըպրակ էրեսիցը մազ արավ, էկավ, որ՝ ես քոսակ չեմ, էկավ թագավորի մենձ աղջիկը ուզեց:

Պուճուրը ասեց.— Ես դրան չեմ ուզիլ:

Տարավ իրան տուն, մի թագի թուլա էփած, մի սինու միշի դրած:

Ասավ.— Եթե էդ շան թուլեն էփած կերի՞լ ես, խո իմ կնիկն ես, չե՞ս կերել՝ ես քեզ կուտեմ:

էս աղջիկը չկել ըիզու լաց էլավ, էդ Քոսակը ըիզունն էկավ, լիկավ տեհավ, որ էդ աղջիկը շան թուլեն կերել չի, ինքը կերավ էդ ըխչկանը:

Ընավորը վեր կացավ, գնաց թագավորին ըսավ, որ.— Մենձ
աղջիկը բռնանգ ա, միջնեկ աղջկանդ եմ ուզում:

Վի կալավ միջնեկ աղջկանը տարավ: Էս աղջիկը գնաց տե-
հավ, որ ոնչ քիր, ոնչ բան, օշով չկա:

Քասակն օխա դուռը իրար միջի բաց անելով գնաց միջի տու-
նը, էդ աղջիկն էլ եղնեն:

Էդ աղջիկը գնաց տեհավ, որ ոնչ քիր, ոնչ զատ. մի սինի, մի
ջան թուլա էփած, միջին վեր դրած:

Ասավ.— Թե թուլեն կուտե՞ս, իմ կնիկն ես, էս էլ քեզ կըպա-
հեմ, կուզեմ, թե չուտես խո՞ ես էլ ըրիզունը գամ՝ քեզ կուտեմ, քու
էրկու՞ քրոջդ էլ ես կերել եմ:

Վեր ա կենում օխտը դուռը փակում, գնում շուր: Էդ աղջիկը
շատ լաց ա ըլլում էդ օրը:

— Աստված,— ասում ա,— թե իմ ստեղծելուն խաբար ես,
ես հայ եմ, հայ քրիստոնյա, տեր աստված, դու ջնջի, վեր կոր-
ծանե էս հարամ ջան թուլան:

Աստծուն դրա խոսքը դիր ա գալի: Գետինը եդ ա բացվում,
սինին ու թուլեն նի են ընգնում:

Ըրիզունը Քոսակը գալիս ա տենում, որ ոնչ սինի, ոնչ թուլա:
Ասում ա.— Ի՞նչ արիր:

Ասում ա.— Քու տունդ շինվի, քեզանե հենց վախեցի, սինին
հետը կուլ տվի:

Ասում ա.— Ա՛յ դու իմ կնիկն ես:

Նրա էքսը Քոսակը գնաց շուր, էս հարսը մտիկ արավ, տեհավ
մի բլանիք կախ արած. էդ բլանիքը վե կալավ, մի գուռը կար, բաց
արավ: Բաց արավ, տեհավ միջին մի զարգար, մեկ էլ մի դուրգար:

Ասին.— Աստծո՞ սիրես, որ դուռը բաց ես արել, բաց արա
մի ճանապարհ, դուն էլ մեր քիրը, մենք ըլինք քու աղբերը, մենք
ընկնինք ճանապարհը, գնանք էս անօրենի ձեռիցը:

Դրանք վեր կացան, փետե տունիկ շինեցին, էդ ըղջկանը դրին
միջին, առան գնացին թագավորի մոտ:

Ասին.— Թագավորն ապրած կենա, զարգար-դուրգար չե՞ս
ուզի:

Ասավ.— Բարով, հազար բարով էք եկե, խի՞ չենք ուզիլ:

Դրանք վեր էկան թագավորի ամարաթումը, էդ ըխչկանը ամեն
հացահերթին էդ փետե տունիկի միջիցը հանում են, հետներնուն
հաց են ուտացնում:

— Ընվանաբառ ասացողը շփոթել է՝ աետք է լինի՝ մենն—Մ. Կ.:

Օրին մի օր ըխշկանը ուտացնում են, եդ պահում են:

Ժամանակով թագավորի տղեն բրավուրդ արավ, դրանք մի սիրուն աղջիկ փետե տունիկի միջին պահած ունին:

Ասում ա.— Զարգար-դուրգար, էդ աղջիկը չանեցեք, ես պտիմ ուզիլ:

էկավ թագավորի տղեն էդ ըխշկանը ուզեց: Ժամանակով էդ աղջիկը խտոր ընկավ, բերուց մի տղա:

էդ Զարգար-դուրգարը էդ ըխշկանը տվին մի փունջ վարդ, մի փունջ մանուշակ:

Ասին.— Պհի՛, քեդ մի ժամանակ պետք կգա:

Դրուց բխի գլխի տակին:

էդ Քոսակը պտտվելով էկավ թագավորի դուռը, էդ ըխշկանը ճնաշեց, որ «Ա՛յ պզտի հարսն ա, Զարգար-դուրգարն էլ կըլտին ա»:

Ասավ.— Թագավորն ապրած կենա, նոքար շե՛ս ընդունիլ ինձ:

Կնիկը ասավ.— Զեռը վեկալ, դրան նոքար մի բռնիլ, դրանից մենք խաթա կքաղենք:

Մարդը անկանջ շարավ: Դրան բռնեց նոքար: Դրան բռնեց նոքար, դա գնաց դուքանիցը քարթու գինի առավ: Գինին բերուց էդ խալխին քարթու գինի խմացրուց: էդ խալխը հարբեցին, վեր դառան:

Դա էս հարսին ասավ.— Գնա ձեր եզր դուս պի: Հարսը վախելեն գնաց եզր դուս պերուց տվուց իրան:

Ասավ.— Զեր վենձ պղինձն էլ պի:

Գնաց վախելեն պղինձ բերուց տվուց իրան:

Տարավ հեռու շուրմը մի թեժ կրակ արալ, էդ ընդանին դրուց կրակին վրա:

Ասավ.— էդ եզր դուս արա, լքցրու ձեր ընգնանին:

էդ ընգնանին էդ եզր լավը հալվեց, էփում ա կրակին վրա:

էկավ հարսին ասավ.— Ղու էլ գնանք:

Ճամբին հարսը ասավ.— Կանգնի, մի ես դնամ բխին տենամ, դամ:

Դրան խաբեց, բխին մտիկ շարավ, էկավ վեր. «Զարգար-դուրգար, Զարգար-դուրգար».— կանչեց:

Ասավ.— Չո՛ւ, ցա՛վ, բխիդ գլխի տակինը կրակ գցի:

Դա վախելեն իմացավ ոչ: Վե կացավ եդ գնաց: Գնաց հասավ Քոսակին:

Մին էլ ասավ.— Քոսակ, աստված սիրես, թող գնամ թագա-
վորի տղին բարևեմ ու գամ:

էկավ էլի ղի արեց.— Զարգա՛ր-դուրգա՛ր, Զարգա՛ր-դուր-
գա՛ր:

էլի ասավ.— Զոռ, ցավ, բեխիդ գլխի տակինը կրակ գցի:

Դա նոր հասկացավ, բեխի գլխի տակի վարզն ու մանիշակը
զցեց կրակը, որ զցեց կրակը, դրա ծխիցը խալխը վրա նստեցին:
էն ժամանակ, որ վրա նստեցին, թագավորն առավ.— էս ի՞նչ
բան էր:

Ասավ.— Գլուխդ մեռնի, քեզ չէ՞ ասի, թե Քոսակին նորար մի
բռնի՞լ, մենք կորած ենք, վնաս կքաշենք:

Թագավորն ասավ.— Բա Քոսակն ո՞ւր ա:

Ասում ա.— Ո՞ւր պտի ըլլի, մեր եղիցը տարել ա մեր հան-
դումը կրակ արել, մեր մենծ պղինձը տարել ա դրել կրակին, մեր
եղերը մեջը լքցրել, որ ինձ տանի տկլորի, կոխի եդ եղի մեջը:
Սղումն ինձ էփեր, էրեր:

Թագավորն ասավ.— Մենք էլի եդ թուլ կլինք, թող Քոսակը
դա, էլ դու մի վախիլ:

Քոսակն էկավ ասեց.— Ղու իլ, գնանք:

էդ ժամանակ վի կացան դրանք, Քոսակին բռնեցին տարան:

Ասին.— Որդի՞ էս կրակ արել: Ղու իլ գնանք վառած կրակիդ
կուշտը:

Տարան իրան կրակի կուշտը:

Ասին.— Շորերդ հանի՛:

Տկլորեցրին, կոխեցին իրան էփած եղի մեջը:

էրեցին, վեր զցեցին:

էկան իրան տուն, թագա նորից մակարիճ արին, կերան, խր-
մեցին, րեֆ արին, որ մեր թշնամու հախիցը էկան:

Նրանք հասան իրանց մուրադին, դուն էլ հասնիս քու մու-
րազին:

Աստծանե իրեք խնձոր կախ էլավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսո-
ղին, մեկն էլ՝ սլամ աշխարհին:

